այլուր:[22] Ընդ որում, դրանք չպէտք է շփոթել աղօթքի գորգերի հետ, որովհետեւ վերջիններս վերոյիշեալ աղբիւրներում տարբերակուած են հէնց աղօթքի գորգ անունով:[23]

Ամփոփելով տապաստակի մասին մեր ասելիքը՝ նշենք նաեւ, որ վրացական ցեղերի միջավայրում գորգագործական մշակոյթն առհասարակ զարգացած չի եղել, ուստի, ինչպէս նկատել է Պ. Մուրադեանը, «քաղաքական ու պատմաշխարհագրական մերձութեան, ինչպէս նաեւ համաբնակ գաւառների ու քաղաքների առկայութեան պարագաներում հայոց այդ կարգի արտադրութիւնները ճանաչում պէտք է ունենային նաեւ հարեւան Վրաստանում»[24]:

22 A. Meg, նշ. աշխ., էջ 365

23 Նոյն տեղում

24 Պ. Մուրադեան, նշ. աշխ., էջ 201

ՈՒԽՏԻ ԽԱՉ-ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ

Աստղիկ Իսրայէլեան

Հայաստանի պատմութեան թանգարանում պահուող մետաղէ հմայական պահպանակներից մի քանիսը կոչւում են «ուրբաթարուր»: Ինչպէս նշւում է բացատրական բառարանում, «ուրբաթարուր» (կամ «ուրբաթարօր») բառի նշանակութիւնն է՝ «չար աչքի դէմ յուռութ, բաղկացած կիսալուսնաձեւ կամ խաչաձեւ մի կտոր երկաթից, որ շինել են տալիս դարբիններին (առանց խօսելու) աւագ ուրբաթ օրը լուսածագին եւ կարում են երեխաների գլխին կամ ուսին»[1]: Սակայն խաչաձեւ ու լուսնաձեւ հմայական պահպանակներ էին սարքում նաեւ արծաթից: Դեռ աւելին՝ տարբեր գործառոյթների հետ մէկտեղ արծաթէ խաչերը երկաթէ դողուրբաթարուրների, մատանիների, ապարանջանների եւ այլ առարկաների նման նաեւ սրբատեղիների գրաւների դեր էին կատարում:

Հայաստանի պատմութեան թանգարանի ազգագրութեան թիւ 1 պահոցում ուխտի գրաւի 7 խաչեր կան. բոլորը հաւասարաթեւ են եւ ակնազարդ: Պատրաստուել են ԺԸ դարում: Խաչերից միայն մէկն է անթերի պահպանուել (ՀՊԹ Ա[2]4898), միւսների կախիկներն են բացակայում, ակերը կամ նախչերից մի քանիսը պոկուած են:

Խաչերից ոչ մէկի ծագման վայրը չի նշուել դրանք ձեռք բերելիս: Ցայտնի է միայն, որ սրանցից մէկը սասունցիները ժամանակին իրենց հետ Սասունից բերել

1 Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, հտ. III, Երեւան, 1944, էջ 612

2 Հայաստանի պատմութեան թանգարանի ազգագրութեան բաժնի առարկաների անձնագրերի հերթական համարներն են:

են Թալինի Գետափ գիւղը (ՀՊԹ Ա 6845), մէկն էլ ալաշկերտցիները Ալաշկերտից բերել են Ստեփանաւանի Շահնազար գիւղը (ՀՊԹ Ա 5282):

Կատարման եղանակով ու ոճով իրար շատ նման են խաչերից հինգը (ՀՊԹ Ա 6845, 5278, 7247, 6842, 5282): Դրանք սարքուած են ձուլածոյ, պարզ մետաղսարքուած եւ զուգաթելի աշխատանքով զարդարուած վերադիր գնդիկներով, մանր հատիկներով, ձգուած շեղանկիւնիներով եւ ապակէ ակերով: Միայն մէկն ունի մի մարջան եւ շղթայ (ՀՊԹ Ա 6845): Խաչերի կենտրոններն ընդգծուած են շրջանի կամ քառանկեան ձեւով, թեւերն աւարտւում են ոճաւորուած շուշաններով: Ընդհանուր ձեւով սրանց շատ նման են ԺԸ դարում եւ ԺԹ դարի սկզբին Սսում, Աղանայում, Ակնում պատրաստուած խաչերը, որ պահւում են Անթիլիասի Կիլիկեան թանգարանում:[3] Սակայն ուշագրաւ է, որ ԺԶ-ԺԸ դարում Արծկէում, Վանում եւ Վասպուրականի միւս բնակավայրերում պատրաստուած բազմաթիւ եկեղեցական առարկաներ, այդ թւում եւ՝ դրքերի արծաթէ կազմեր ու խաչեր՝ իրենց զարդանախշման մանրամասներով եւ կատարման տեխնիկայով (պահւում են Էջմիածնի Մայր տաճարի թանգարանում) շատ նման են թ՛ւ Կիլիկիայում պատրաստուած, թ՛ւ Հայաստանի պատմութեան թանգարանում պահուող նշուած 5 խաչերին: Այստեղից կարելի է ենթադրել, որ այդ խաչերը պատրաստում են Վասպուրականի ոսկերչական դպրոցին: Հնարաւոր է, որ վասպուրականցի վարպետների աշխատանքները տա-

3 H. Goltz, K. E. Göltz, *Rescued Armenian Treasures from Cilicia*, 2000, p.116, 125.

© National Library of Armenia

բուել են տարբեր վայրեր, կամ նրանք այլեւայլ տեղերում են դրանք սարքել եւ, ի վերջոյ, կարող էին պարզապէս այս խաչերի ձեւերը փոխառուել նրանցից, առաւել եւս, որ սրանց կախիկների տեսակներն էլ են բնորոշ Վանի եւ նրա յարակից շրջանների արծաթագործութեանը:

Ընդհանրապէս, եկեղեցական խաչերի եւ որպէս գրաւ պատրաստուած խաչերի տարբերութիւնն այն է, որ առաջինները մեծամասամբ աւելի մեծ խնամքով ու նրբութեամբ են պատրաստուած:

Թանգարանի հաւաքածոյի խաչերից մէկը մետաղաթելից է, առանց վերադիր զարդերի, հիմնական թեւերը, ի տարբերութիւն շուշանաձեւ ծայրերով խաչերի, պարզ ծաղկաթերթիկների նման են, նրանց արանքներում նոյնպիսի, սակայն աւելի փոքր թերթիկներ են տեղադրուած, կենտրոնում կարմիր ակն է (ՀՊԹ Ա 4898): Խաչն ունի երեք կախիկ, որոնցից երկուսը շրջանաձեւ են, երրորդը ռուսական փոքր դրամ է: Զարդամասերի փոխարէն յաճախ են օգտագործուել դրամները, նրանք, ըստ ժողովրդական հաւատալիքների, խորհրդանշում են լուսինը: Ճիշտ ՀՊԹ Ա 4898 խաչի կառուցուածքով հայկական մի խաչ է պահւում Սանկտ-Պետերբուրգի Ազգագրութեան թանգարանում: Այն ձեռք է բերուել 1911 թ. Բաթումի մարզում (4,2x4,2 սմ, կախիկներով՝ 4,2x8 սմ): Սա նոյնպէս կենտրոնում կարմիր ակ ունի (Армяне 3242/11): Չի բացառւում, որ Հայաստանի պատմութեան թանգարանի ՀՊԹ Ա 4898 խաչն էլ է պատրաստուած Սեւ ծովի մերձակայ հայկական բնակավայրերում:

Ժողովածոյի եօթ խաչերից միայն մէկն է պատրաստուած դրուագման եւ փորագրազարդման եղանակով, սրա կախիկները չեն պահպանուել: Խաչի մեծ թեւերից իւրաքանչիւրի վրայ ոճաւորուած կենաց ծառ է փորագրուած, նրանց միջեւ տեղադրուած փոքր թեւերին՝ ծաղկանման նախշեր, մէջտեղը եւ թեւերին՝ 3 փիրուզէ եւ մէկ կարմիր ակ (ՀՊԹ Ա 4825):

Գրաւի խաչերի հիմնական առանձնայատկութիւններից է կախիկների պարտադիր առկայութիւնը (անկախ պահպանուած լինել-չլինելուց), որոնցով սրանք տարբերւում են հայկական եկեղեցական խաչերից՝ մասնատուփ-խաչերից, խորանի, թափորի խաչերից, խորանի մասնատուփերից, որոնք, գլխաւորապէս կախիկներ չունեն, եթէ նոյնիսկ չափերը նոյնն են:

Թանգարանում պահւող գրաւի խաչերը, ինչպէս նշուած է անձնագրերի տուեալներում, երկու հիմնական նպատակով էին օգտագործւում՝ երեխայ ունենալու եւ տարբեր հիւանդութիւններ բուժելու համար: Անզաւակ կանայք այս խաչերը վերցնում էին սրբատեղիներից կամ հրաշագործ Աւետարան ունեցող տնից եւ կրում էին այնքան ժամանակ, մինչեւ երեխայ ունենային: Այնուհետեւ ետ էին տանում եւ թողնում ուխտատեղիում: Գողթան գաւառում, օրինակ, երեխայ ունենալու համար, ինչպէս եւ այլուր, դիմում էին սրբերի օգնութեանը: Ոտաբոբիկ գնում էին Ս. Ստեփանոս, Ս. Կարապետ եւ այլ ուխտատեղիներ, ուր աղօթելով յայտնում էին փափագը, մասունքի վրայից մի մատանի էին վերցնում՝ խոստանալով, որ եթէ սուրբը խնդրանքը կատարէր եւ երեխայ տար, ոչ միայն այդ մատանին ետ կը բերէին, այլեւ մի խաչ կ'ընծայէին: Երբ երեխան ծնւում էր, դունէդուռ էին ընկնում, մուրում եւ ստացած դրամով մի արծաթէ շղթայ, մի փոքրիկ խաչ էին սարքել տալիս եւ կախում էին երեխայի վզից: Երբ նա 3-4 տարեկան էր դառնում, այդ շղթան ու խաչը հալեցնելով՝ մի մեծ խաչ էին շինել տալիս ու սրբատեղիից վերցրած մատանու նման մի նոր մատանի: Երեխայի հասակի երկարութեամբ երկու մոմ էին վերցնում, ինչպէս նաեւ նոր պատրաստուած խաչը, հին ու նոր սարքած մատանիները եւ երե-

խայի հետ գնում էին ուխտ, շնորհակալութեան աղօթք էին անում, մոմեր վառում եւ մատանիներն ու խաչը կախում էին մասունքից:[4] Նոր Ջուղայում, մեծամասամբ, Ս. Գեւորգ եկեղեցուց են խաչը վերցնում: Սա ամենազօրեղ սրբավայրն է, որովհետեւ այստեղ են Ս. Էջմիածնից բերուած քարերը տեղադրուած: Հիւանդութիւններ բուժելու, երեխայի խօսելու, քայլելու համար եւ այլ նպատակներով խաչն ամրացնում են սրտի կողմում՝ հագուստի վրայ, եւ նպատակն իրագործուելուց յետոյ ոչ միայն այդ խաչն են վերադարձնում, այլեւ նրա կրկնօրինակը, երբեմն՝ նոյնիսկ մի քանի կրկնօրինակ (հաղորդել է Աւօ Յովհաննիսեանը):

Ընկնաւորութիւնը եւ վախը բուժելու համար Սեւանի աւազանում հիւանդին տանում են սուրբը, այնտեղի խաչը գցում են ջրի մէջ (սա կոչւում է «խաչլուայ») եւ ջուրը խմեցնում են նրան: Եթէ հեշտութեամբ չի բուժւում, խաչը կախում են վզից, եւ նա այնքան ժամանակ է կրում, մինչեւ հիւանդութիւնն անցնում է: Յետոյ խաչը կրկին տանում են նոյն տեղը եւ անպայման հետը նաեւ մի նուէր են դնում՝ շուշփայ կամ մի այլ իր, մոմ են վառում եւ խաչհամբոյր են գցում:[5] Հոգեկան հիւանդին բուժելու համար ուրբաթ օրը նրան տանում են սրբատեղի ու մնում այնտեղ մինչեւ կիրակի օրը: Շեշտւում է, որ կարեւոր է այնտեղ գիշերելը եւ կիրակնամուտին այնտեղ գտնուելը: Ըստ տեղացիների հաղորդած տեղեկութիւնների՝ հիւանդը սրբի խաչը բերանն է դնում կամ կուլ է տալիս եւ կամ կիսակուլ անում, որից հետո այն հանում են շղթայից ձգելով ու համարում, որ ապաքինումը դրա շնորհիւ է երաշխաւորւում:[6] Հիւանդութիւն բուժելու նպատակով ուրիշ խաչեր եւ խաչանշաններ էլ էին լայնօրէն օգտագործւում: Օրինակ՝ երբ երեխան ճմրուկ հիւանդութիւն էր ունենում, նրան բուժելու համար մի բոքոն էին վերցնում եւ անխօս տանում էին ու շառաջի առջեւ դնում: Նա հասկանում էր եկողի նպատակը, վերցնում էր մի կտոր կաշի, խաչաձեւ կտրում էր ու տալիս բոքոնը բերողին, վերջինը կաշին բերում էր տուն եւ կապում երեխայի բազկին:[7]

Լուսնից հիւանդացած երեխային բուժելու համար պղնձի կամ կաւէ պտուկի տալու համար ճակատի մուրը խաչաձեւ քսում են նրա ճակատին, կզակին ու այտերին:[8] Իսկ լուսնից նախօրօք պաշտպանուելու համար Տեառնընդառաջի կրակի մոխիրը ջրով խառնում են եւ խաչի ձեւով քսում երեխայի ճակատին ու ձեռքերի ափերի մէջ:

Նորածին մանկանը թպուից ազատելու համար ճակատն ասեղով խաչաձեւ դաղում են: Իսկ վախից հիւանդացած երեխային բուժելու համար (երբ թուլանում է, վատ է քնում եւ այլն) կրծքին ափսէով խաչաձեւ բամբակ են դնում ու վառում:[9] Խաչանշանը պարտադիր է նաեւ «գրով» բուժելիս: Գրբացը կիպրիանոսից աղօթք է գրում թղթի վրայ, եռանկիւնաձեւ ծալում է, վրան մեղրամոմ է քսում, փաթաթում սպիտակ կտորի մէջ, վերջում վրան երկու խաչ է գծում եւ կապում է հիւանդի վզին:[10]

---

4 Ե. Լալայեան, *Նախիջեւանի գաւառ*, «Ազգագրական հանդէս», գ. XII, Թիֆլիս, 1905, էջ 135-136

5 Ա. Իսրայէլեան, *Դաշտային ազգագրական նիւթեր. Կամ, Մարտունի*, 1982, էջ 5, հետագայում՝ ԴԱՆ

6 Ա. Իսրայէլեան, ԴԱՆ. *Կամ, Մարտունի*, 1982, էջ 11-12

7 Ե. Լալայեան, *Նոր-Բայազէտի գաւառ*, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1907, էջ 46

8 Ա. Իսրայէլեան, ԴԱՆ, *Թալին*, 1977, էջ 39-40

9 Ա. Իսրայէլեան, ԴԱՆ. *Կամ, Մարտունի*, 1982, էջ 8, 12, 31

10 Ա. Իսրայէլեան, ԴԱՆ. *Սոչմուի*, 1976, տետր թիւ 2, էջ 17

© National Library of Armenia

Հիւանդութիւններից փրկող եւ բուժող են համարւում խաչքարերը, որոնց այս յատկութիւնների վերաբերեալ շատ հետաքրքրական օրինակ է բերում Բենսէն: Հարքում շնոփոր կամ շնուոր[11] (ըստ Բենսէի կողերը սեւացնող ցաւ) սոսկալի հիւանդութիւնից ազատուելու համար գիւղի չորս կողմը խաչարձաններ էին կանգնեցնում:[12] Խաչքարերի վրայ ամէնուրեք մոմեր են վառում, զոհեր մատուցում՝ բուժում ստանալու համար:

Խաչը հիւանդութիւն բուժող է տարբեր ժողովուրդների հաւատալիքներում: Այսպէս, Նաւախո ցեղի հնդկացիներն էլ են խաչով հիւանդութիւն բուժում: Տուեալ դէպքում բուժումը կապւում է խաչի եւ աշխարհի չորս կողմերի հետ (ի դէպ, արժէ ընդգծել, որ Հարքում էլ էին գիւղի չորս կողմը խաչքարեր կանգնեցնում): Նրանք հաւատում են, որ ցանկացած հիւանդութիւն կարող է բուժուել, եթէ հիւանդը պառկի ծառի ճիւղերից սարքուած այն խաչի վրայ, որի ծայրերը ճշգրտօրէն ուղղուած են հիւսիս, հարաւ, արեւելք եւ արեւմուտք:[13]

Բացի հիւանդութիւններ բուժելուց եւ զաւակ պարգեւելուց, խաչը բազմաթիւ այլ գործառոյթներ ունի՝ որպէս պահպանակ: Նրա կարեւորագոյն յատկանիշերից է չար ոգիներից պաշտպանելը: Թէ՛ իրեղէն խաչը եւ թէ՛ խաչաձեւ շարժումն է ծառայում այս նպատակին: Օրինակ՝ յօրանջելիս պէտք է բերանը խաչակնքել, որպէսզի չարքերը չներխուժեն մարդու մարմնի մէջ: Հաց թխելիս տաքացրած ջուրը պէտք է խաչակնքել, որպէսզի սատանան մէջը չլուացուի, եւ մաղած ալիւրի վրայ խաչ քաշել, որպէսզի չարը չմօտենայ:[14]

Խաչը միաժամանակ չարքերից է պաշտպանում, առատութիւն ու բարիք է բերում: Կեսարիայում որպէսզի տան «պէրէքեթը» չփախչէր, մաղած ալիւրն ամբարը լցնելուց յետոյ, ինչպէս եւ հացի խմորի վրայ, անհրաժեշտ էին համարում խաչանշան անելը:[15] Վանում եւս խմորին խաչ էին քաշում եւ դեռ սեւ սունիճն էլ վրան էին ցանում. խաչն ապահովում էր «բարաքեաթը»՝ լիութիւնը, իսկ սունիճը չարքերից էր պաշտպանում: Այստեղ պանիրն աղ դնելիս էլ առաջին կտորը խաչաձեւ էին կտրում, յետոյ մնացածը վրան էին շարում, որպէսզի պանիրն առատ լինէր:[16] Հարքում իւղն անօթը լցնելիս «բղիկները» խաչակնքում էին եւ իւղի վրայ խաչ քաշում, որպէսզի փերիներն այն չփախցնէին: Կանայք հանդերձները սնդուկների մէջ պահելիս կրկին խաչակնքում էին, որպէսզի փերիները դրանք չգողանային:[17]

Կենդանիներին չար աչքից պաշտպանելու համար տարբեր նիւթերից խաչեր էին պատրաստում եւ կախում էին նրանց վզից ու եղջիւրներից՝ Լոռիում՝ բռինչից[18] Մաքրավանքում՝ թխկի, հացենի ծառերի

11 Այս հիւանդութիւնը կոչւում է նաեւ *շնոհուոր, շնորհաւոր*՝ շնացաւ կամ քաղցկեղ: Ենթադրւում է, որ *շնորհաւոր* ցաւը աներեւոյթ մի ոգի է, որը գգիր ունի՝ *շնորհաւորի գգիր* (Էմինեան ազգագրական ժողովածոյ, հտ. Թ, Թիֆլիս, 1913, 834-835): Անուանւում է նաեւ *շնոհուոր*. տարափոխիկ վտանգաւոր հիւանդութիւն է, յատկապէս՝ ժանտախտ: Կան բազմաթիւ անէծքներ՝ *շնոֆորը վրէդ դնեմ, տակը մնաս* կամ *Մշու շնոֆոր զարկայ քեզ* (**Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, III, 1944, էջ 527):

12 **Բենսէ**, *Բուլանըխ կամ Հարք գաւառ*, «Ազգագրական հանդէս», գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 50

13 **Нейхардт**, *Происхождение креста*, М.,1956, с. 13.

14 **Ա. Ալպոյաճեան**, *Պատմութիւն հայ Կեսարիոյ*, հտ. Բ, 1937, էջ 1792-1793

15 **Ե. Լալայեան**, *Զաւախք*, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1895, էջ 358

16 **Վ. Խանջեան**, *Վանի կեանքը եւ կենցաղը 1884-1915 թթ.*, Հայաստանի պատմ. թանգարանի ազգագրութեան բաժնի արխիւ, թիւ 51, էջ 22

17 **Բենսէ**, *Բուլանըխ կամ Հարք գաւառ*, «Ազգագրական հանդէս», գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 13

18 **Ա. Իսրայէլեան**, *ԴԱՆ. Լոռի*, 1972, էջ 28

փայտից,[19] փայտէ պահպանակների վրայ խաչ էին փորագրում, այլ վայրերում նաեւ երկաթից էին խաչեր սարքում:

Երեխաներին «չար աչքից ու նաւսից պաշտպանելու համար» Աշոցքում բռնչի փայտից սարքած խաչ են գցում նրանց վիզը:[20] Գեղարքունիքում չար աչքից պաշտպանելու եւ հիւանդութիւններ բուժելու նպատակով երեխաների հագուստի թիկունքին, ուսին կամ գլխարկին կարմիր կամ կապոյտ կտորից խաչ են կարում, վրան էլ մի խեցի ամրացնում («օրոճ»), կամ ոսկէ, երբեմն էլ՝ ոսկեզօծ խաչ գցում երեխայի վիզը:[21]

Խաչը որպէս չար աչքից պաշտպանող եւ զօրութիւն տուող պահպանակ է հանդէս գալիս նաեւ «Սասնայ ծռեր»-ում: Մ. Աբեղեանը ոչ միայն առանձնայատուկ ուշադրութիւն է դարձրել համայիլ խաչի վրայ, այլեւ ընդգծել է պահպանակի դերի կարեւորութիւնը ժողովրդական հաւատալիքներում: Նա հերոսների աջ թեւին կամ ծոցում պահուող, սերնդէսերունդ փոխանցուող հմայիլի մասին գրում է. «Մեր ժողովրդի հասկացողութեամբ, փահլեւանն առանց հմայիլի փահլեւան չէ: Հմայիլը նրան ուժ է տալիս եւ փորձանքից ու չար աչքից ազատ պահում: Դա եւս կայ մեր դիւցազների «սարքի» մէջ, որ է «խաչ պատրազին վեր աջ թեւին» կամ «համայիլ սուրբ խաչ, Մարութայ բանձրիգ սուրբ Աստուածածին...»:

«Դաւիթն իր ծոցում համայիլ ու սանդր է պահում: Սանդրը սուտ երդման համար է եւ մի երկու պատմուածքի մէջ է միայն երեւան գալիս. իսկ համայիլի վրայ տուած երդումն անպատճառ պէտք է պահէր, թէ չէ կը պատժուէր: Նոյն հմայիլը կոչւում է սուրբ Նշան, այսինքն՝ սուրբ խաչ, որի զօրութիւնով Դաւիթն անվնաս է մնում: Այս սուրբ Նշանը յետոյ Մհերն է դնում ծոցը...»:

«Համայիլ, Ս. Նշան, Մսէ խաչ որ պատրաստի, խաչ պատ[ա]րագին, խաչ պատ[ա]րագին՝ բոլորը նոյն բանն են եւ պատ[ա]րագին՝ բոլորը նոյն բանն են»[22]: Ի միջի անխտիր իրար տեղ բռնում են: Ամայլոց, սասունցիներն ու մշեցիները հիմա էլ երդուելիս «խաչ» են ասում ասուածը հաւաստելու համար՝ որպէս երդում:[23]

Խաչն, անկասկած, շատ հին ժամանակներից է հանդէս գալիս՝ որպէս բարեբեր նշան, ինչպէս ցոյց են տալիս մ.թ.ա. հինգերորդ հազարամեակի եւ հետագայի ժայռապատկերները, բրոնզէ, կաւէ եւ այլ նիւթերից պատրաստուած առարկաները: Կարելի է յիշատակել նաեւ Բաբելոնի օրինակը. Համուրաբիի ժամանակաշրջանի մէն մի վաւերագիր աւարտւում է խաչանշանով, որն օրհնութիւն է բերում՝ ապահովելով նշուած գործի յաջողութիւնը:[24]

Խաչն ու խաչանշանը պարտադիր անհրաժեշտ տարրեր են բազմաթիւ տօնների եւ ծէսերի ժամանակ: Նոր տարուն եւ հարսանիքին ալիւրով խաչ են գծում տան դռան եւ սիւների վրայ: Փետրուարի վերջին օրը փուռդիք եւ պուպուշիկ ոգիներին դուրս քշելուց յետոյ երկու փայտ խաչաձեւ դնում էին երդիկի վրայ, որպէսզի խաչի զօրութիւնից նրանք հալածուէին եւ չկարողանային վերադառնալ: Վարդավառին ամէնուրեք ծաղիկներից խաչեր էին հիւսում եւ կապում էին «կթան կովերի» ճակատներին: Աղջիկները «վըրթիվեր» կոչուող ծաղիկներից հիւսուած խաչ էին դնում իրենց առջեւ ու «գիւլում»-ի քա-

19 **Ա. Իսրայէլեան**, *ԴԱՆ. Մաքրավանք*, 1981, III, էջ 13

20 **Ա. Իսրայէլեան**, *ԴԱՆ. Ղափան*, 1981, II, էջ 13

21 **Ա. Իսրայէլեան**, *ԴԱՆ. Կամո, Մարտունի*, 1982, էջ 44, 46

22 **Մ. Աբեղեան**, *Հայ ժողովրդական վէպը*, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1908, էջ 5-6

23 **Ա. Իսրայէլեան**, *ԴԱՆ, Թալին*, 1977, էջ 45

24 **Нейхардт**, *Происхождение креста*, с. 16.

© National Library of Armenia

ռեակներ երգում:[25] Մեծ պասի միջինքին երկու փայտիկներից խաչ են սարքում, դնում իւղի, ալիւրի, աղի վրայ, որպէսզի չար ոգիներից պաշտպանեն պաշարները:[26] Բերքահաւաքի ծէսի ժամանակ երբ հունձն աւարտում են, ցորենի հասկերից «խաչբուռ» են հիւսում, նուիրում հնձուորի մօրը, որը բարեմաղթում է եւ ձուածեղ ու գաթայ տալիս նրան՝ «ապահովելով բերքի լիութիւնը»[27]: Իսկ երբ հացահատիկն արդէն լցնում էին գետնի մէջ փորուած փոսը, գիւղացիները հասկերից խաչ էին սարքում («խաչբուռ») եւ դնում վրան: Եթէ չդնէին, սատանաները կը փախցնէին հացահատիկի ողջ պաշարը:[28] Մատաղ անելիս, ում համար որ զոհաբերում են կենդանուն կամ թռչունը, արիւնը խաչաձեւ քսում են նրա ճակատին եւ կրծքին, որպէսզի նպատակն իրականանայ:[29] Երեխայ ծնուելիս խաչաձեւ շարժումներ էին անում օդում՝ ծննդկանի շուրջը: Վասպուրականում, ինչպէս նշում է Ե. Լալայեանը. «Տատմօր առաջին գործը լինում է վերցնել մի շամփուր եւ նրանով խաչեր գծել սենեակի չորս պատերի վրայ, որպէսզի չարքերը հալածուեն եւ չկարողանան ծննդկանին մերձենալ, ապա նոյն շամփուրը տալիս է ծննդկանի ձեռքը եւ ինքը սկսում աղօթել»[30]: Ուշագրաւ է, որ նորածին երեխային չար աչքից պաշտպանելու համար Խորեզմի ուզբեկներն էլ էին խաչեր գծում յատակին:[31]

Պսակադրութեան ծէսում, սկսած նշանադրութիւնից, խաչը անհրաժեշտութիւն էր. Ա. Քիրազեանը Ռոդոսթոյի հայերի մասին գրում է. «Երբ յարմար աղջիկ մը գտնեն, իրենց տաներէց քահանան կը ղրկեն, որ աղջկան ծնողքին իմացնէ. երբ այս վերջինն ալ տղուն հաւնին ու խօսք տան, եկեղեցիէ խաչ մը կը գնեն, կը յանձնեն քահանային, որ զայն աղջկան տանը կու տայ, եւ այս կերպով աղջիկ կը նշանուի»[32]: Լոռիում նշանադրութեան ժամանակ տղայի տնից աղջկայ տուն գնալիս տղայի հայրն էր խաչ նուիրում հարսնացուին,[33] Տաւուշում՝ նոյնպէս:

Պսակադրութեան առիթով մետաքսէ թելերով պատում էին եղեգնեայ փոքրիկ խաչը, տնկում էին խնձորի կամ նռան մէջ եւ դնում էին թագաւորի գդակի վրայ՝ որպէս թագ:[34] Եկեղեցում արարողութեան ժամանակ դեւերին հալածելու համար խաչը կախում էին փեսայի կրծքից[35]: Փեսացուի ասեղնագործ նախշերով վերնաշապիկը խաչերով էին զարդարում: Այսպիսի մի օրինակ է պահւում ՀՊԹ-ում: Շապիկը կարուել է ԺԹ դարում Թիմարում (ՀՊԹ Ա 2061): Ամբողջ կուրծքն ասեղնագործուած է, կենտրոնում մի կարմիր խաչ կայ, շուրջը՝ տարբեր նախշեր, որոնց թւում կրկին խաչաձեւ եւ Տ-աձեւ զարդագօտիներ (Վանի Ալիւր գիւղում գնել է Ե. Լալայեանը):

25 Ստ. Լիսիցեան, *Զանգեզուրի հայերը*, Եր., 1969, էջ 276

26 Ա. Իսրայէլեան, *ԴԱՆ. Թալին*, 1977, էջ 2

27 Ա. Իսրայէլեան, *Հացի զոհաբերութիւնը հայոց հին հաւատքում*, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 2000, էջ 324

28 Н. Григоров, *Село Татев*, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис, 1892, 118.

29 Ա. Իսրայէլեան, *ԴԱՆ. Կամո, Մարտունի*, 1982, էջ 2

30 Ե. Լալայեան, *Վասպուրական*, գ. XX, Թիֆլիս, 1910, էջ 166

31 Г. П. Снесарев, *Реликты домусульманских верований и обрядов у узбеков Хорезма*, Москва, 1969, с. 90.

32 Ա. Քիրզայեան, *Ռոտոսթոյի հարսանեկան սովորոյթները*, Կ. Պոլիս, Բիւրակն, 1899, էջ 165:

33 Ե. Լալայեան, *Բորչալուի գաւառ*, «Ազգագրական հանդէս», գ. IX, 1902, էջ 217

34 Քաջբերունի, *Հայկական սովորութիւններ*, «Ազգագրական հանդէս», գ. VII-VIII, 1901, էջ 190

35 Ե. Տէր-Մկրտչեան, *Վանեցոց հարսանիքը*, «Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն», Եր., 1970, թիւ 1, էջ 165

Չար աչքից եւ դժբախտ պատահարներից պաշտպանուելու համար խաչեր էին գործւում գորգերի[36] ու կարպետների վրայ: Եւ յատկապէս մեծ քանակութեամբ խաչեր են պատկերւում օժիտի համար գործուող գորգահիւս ու կարպետահիւս առարկաների,[37] ինչպէս նաեւ գուլպաների, ասեղնագործուած անձեռոցիկների, սրբիչների, ժանեակների եւ այլ իրերի վրայ: Գործուածքների նախշերում խաչեր եւ կեռխաչեր պատկերելը շատ հին արմատներ ունի: Սրա վկայութիւններից է Արթիկի բրոնզեդարեան թիւ 89 թաղումից յայտնագործուած կեռախաչերով եւ Տ-աձեւ նախշերով հիւսուածքը:[38] Յուղարկաւորութեան ծէսում խաչը հանգուցեալին պաշտպանում է չար ոգիներից: Պատանքի կտորից քահանային խաչաձեւ վարշամակ էին կտրել տալիս եւ դնում էին հանգուցեալի երեսին: Մի բարակ թոկ էլ անցկացնելով ուսի, ոտքերի եւ կրծքի վրայով՝ խաչաձեւ կապում:[39] Յուղարկաւորութիւնից յետոյ թին ու բահը խաչաձեւ էին դնում գերեզմանի վրայ[40] եւ, վերջապէս, խաչքար են դնում գերեզմանների վրայ: Միւս կողմից էլ, սակայն, խաչը պաշտպանում է հէնց հանգուցեալից, երբ նրան խաչաձեւ կապում կամ վրան խաչեր են դնում: Շատ հին ժամանակներից է գալիս խաչի եւ կեռախաչի գործածութիւնը թաղման ծէսում, աւելի ստոյգ՝ նրանց պատկերներով առարկաների առկայութիւնը հանգուցեալի կողքին: Օրինակները բազմաթիւ են. կեռախաչեր ունեն Հառիճի թիւ 65 թաղումում յայտնաբերուած Քա. ԺԷ դարի կաւէ անօթը, Քա. ԺԴ դարի սակրը, Քա. ԺԲ դարի վարսակալը եւ այլն:[41] Բրոնզեդարեան թաղման ծէսի սեւ կաւէ անօթների վրայ կարմիր ու սպիտակ ներկերով էին կեռախաչեր նկարում: Հետաքրքրական է, որ խաչեր նկարելու սովորոյթը, կապուած ծէսի հետ, յարատեւել ու հասել է մինչեւ վերջին ժամանակները, ինչպէս վերը նշուած հայերի՝ հարսանիքի եւ նոր տարուայ առիթներով նկարուող խաչերը (տան ներսի ու դրսի կողմից) կամ, Սվանների Լիպանալ տօնի կապակցութեամբ, (յունուարի 5-ին) բոլոր անօթների, ամանների, դռների եւ տների վրայ նկարուող խաչերը եւ այլն:[42]

Կայծակից պաշտպանուելու համար կրկին հանդէս է գալիս խաչը: Զարչարակրկին հանդէս է գալիս խաչը: Զարչարանց շաբաթուայ Ուրբաթ օրը մայրերը մինչեւ 10 տարեկան երեխաների մէջքին կարմիր, սպիտակ կամ կապոյտ կտորից խաչ էին կարում, որը նոյնպէս կոչւում է «ուրբաթարուր»[43]:

Խաչն անմիջականօրէն կապուած է կայծակի եւ ամպրոպի աստծոյ հետ: Սա արտայայտւում է հետեւեալ կերպ. սուրբ Եղիայի օրը գուրիացիներն իրենց ցանքսերի մէջ, բակում, տան, ամբարների, եգիպտացորենի պահեստների վրայ խաչեր են ամրացնում: Բակի ու ցանքսերի խաչերը պատրաստում են մատղաշ լաստենու ճիւղերից, իսկ տների, ամբարների վրայ, եւ միւս տեղերում դրուողները «լուկումպխա» կոչուող թփի կամ կեռասի փայտից

36 Հ. Գայայեան, *Խաչի զարդամոտիւները կապադովկահայ գորգարուեստում (ԺԳ-ԺԵ դդ.)*, «Էջմիածին», 1977, էջ 59

37 Ա. Իսրայէլեան, *Օժիտի արցախեան մի կարպետ*, «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-12, Վիեննա, 1997, էջ 465-466

38 Хачатрян, *Материальная культура древнего Артика*, Ереван, 1963, с. 134.

39 Լալայեան, *Զաւախք*, «Ազգագրական հանդէս», գ. I, Թիֆլիս, 1895, էջ 310

40 Լալայեան, *Վարանդա*, «Ազգագրական հանդէս», գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 181

41 Хачатрян, *Древняя культура Ширака*, Ереван, 1975, с. 116, 179, 212.

42 В. В. Бардавелидзе, *Древнейшие религиозные верования и обрядовое графическое искусство грузинских племен*, Тбилиси, 1957, с. 121.

43 Ե. Լալայեան, *Սիսիան*, «Ազգագրական հանդէս», գ. Գ, Թիֆլիս, 1898, էջ 256

© National Library of Armenia

են: Պարտադիր է լեռնավարդի թփից մի փոքր կտոր ամրացնել այս խաչերին, որովհետեւ այն կոչւում է «էլի», որ համընկնում է Իլիայի՝ Եղիայի անուան հետ:[44] Իսկ Եղիայ մարգարէն, ինչպէս յայտնի է, կապուած է ամպրոպի, անձրեւի, պտղաբերութեան, ամառուայ բերքի հետ:[45] Նա է, որ երկնքից ողջակէզի համար կրակ է իջեցնում Տիրոջից եւ յետոյ՝ անձրեւ բերում[46]: Կայծակից ու կարկուտից պաշտպանուելու համար հայերը խաչերկաթն են դուրս դնում:

Խաչ-պահպանակները, ինչպէս եւ Խաչելութեան խաչը,[47] կապւում են ուրբաթ օրուայ հետ: Սա ցոյց է տալիս ինքը՝ ուրբաթարուր անուանումը: Ուրբաթարուրները, աւելի ստոյգ, պատրաստւում էին հինգշաբթի՝ լոյս ուրբաթ, այսինքն՝ այն ժամանակահատուածում, որն աւելի մօտ է Ամպրոպի աստծոյ հակամարտութեան օրուան՝ հինգշաբթուան: Դարբինն այդ աստուածութեան մարմնաւորումն է,[48] եւ առասպելաբանօրէն ինքն է խաչը սարքողն ու նրան զօրութիւն տուողը: Նա այդ զօրութեամբ մարդկանց հնարաւորութիւն է ընձեռում պաշտպանուելու հէնց իր ուղարկած չանթերից ու բնութեան այլ երեւոյթներից: Սրա վկայութիւններից են Եղիայի օրուայ խաչերն ու խաչերկաթը:

Երկաթէ խաչը դեռ նիւթով էլ է ամպրոպային՝ որպէս երկնքից ընկած: Երկաթէ ուշագրաւ խաչ է պահւում Սանկտ-Պետերբուրգի Ազգագրութեան թանգարանում, կոչւում է «ուռախաչ», ձեռք է բերուել Բաթումում 1909 թ. (Армяне, 1662/98): Այն կարմիր ներկի հետքեր ունի, ամրացնում էին սուրբ ծառին, շուրջը մոմեր էին վառում եւ աղօթում: Կարմիր ներկն արեան խորհրդանիշն է: Պատկերագրութեան մէջ խաչաձեւ Տիեզերական ծառն աճում է զոհաբերութեան արեան միջից: Դա կարող էր լինել վիշապի կամ անմեղ զոհի արիւնը, տուեալ դէպքում՝ Քրիստոսի, որի արեամբ ներկւում է խաչը:[49] Ինչպէս ամպրոպի աստուածն է հետապնդում ու ոչնչացնում չարին, այնպէս էլ խաչն է վերացնում չարը՝ դրանով իսկ բարիք գործելով, ինչպէս վերը նշուած Համուրապիի ժամանակաշրջանի վաւերագրերի խաչանշանները, որ դրւում էին չարքերին վանելով օրհնութիւն բերելու եւ գործի յաջողութիւնն ապահովելու համար: Առատութիւն, արգասաբերութիւն, պտղաբերութիւն տալը, կապուած խաչի հետ, եւս զուգորդւում է ամպրոպի աստծոյ՝ իր հակառակորդին սպանելու, ջրերն ազատելու ու բարօրութիւն բերելու գաղափարի հետ: Սպանութեանը յաջորդում է միստիկ վերածնունդը: Այստեղից է գալիս խաչի հնագոյն կապը յարութեան ու վերածնունդի գաղափարների հետ:

Հանգուցեալի վրայ դրուող խաչն ունի եռակի գործառոյթ՝ պայմանաւորուած մեռեալի հանդէպ տարածուած երկակի վերաբերմունքով (վախ, ակնածանք)՝ պաշտպանում է հանգուցեալի հոգին չար ոգիներից, պաշտպանում է մարդկանց մեռեալից եւ վերածնունդ է տալիս նրան: Վերջինի երաշխիքն են «ծլող» խաչքարերը, որ

44 **Т. Мамаладзе**, *Народные обычаи и поверья гурийцев*, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 17, отд. 2, с. 60.

45 Мифы народов мира, I, Москва, 1991, с. 506.

46 Գ Թագ. ԺԸ 36-46

47 Խաչերի եւ խաչքարերի խորհրդանիշերի եւ մշակոյթի մասին տե՛ս **Ա. Սաակյան**, *Культово-мемориальные памятники в системе армянской средневековой народной культуры*, Ереван, 1986; **Հ. Պետրոսեան**, *Խաչքարերի ծագումը, գործառոյթը, իմաստաբանութիւնը (Պատմա-ճնագիտական ուսումնասիրութիւն)*, ատենախօսութիւն, ձեռագիր, Եր., 2004:

48 **Ա. Թադեւոսեան**, *Դարբինը հայոց ծիսակարգում*, ատենախօսութեան ձեռագիր, Եր., 1994, էջ 14-15

49 **L. Abrahamian, N. Sweezy**, *Armenian Folk Arts, Culture, and Identity*, Bloomington and Adrianapolis, 2001, p. 283.

դրւում են գերեզմանի վրայ: Խաչքարերի «ծաղկած» խաչի առնչութիւնը ծառի հետ հաւաստում է դեռեւս Գրիգոր Տաթեւացին:[50]

Ուխտի խաչ-պահպանակները (ինչպէս նաեւ բազմաթիւ եկեղեցական խաչերը) խաչքարերի նման զարդարուած են բուսանախշերով:

Խաչի կապը ծառի եւ փայտի հետ արտայայտւում է անմիջականօրէն «խաչ» բառի բացատրութեամբ՝ «խաչը բնիկ հայ բառ է, որ նախապէս «փայտ» է նշանակել»[51]: Անգամ խաչի մասերի անուանումներում է արտայայտւում այս կապը, որտեղ «բունը» ներքեւի թեւն է: Այստեղ տեղին է յիշատակել նաեւ սուրբ Նունէի կանգնեցրած խաչը, որը փայտից էր եւ բժշկելու զարմանահրաշ զօրութիւն ունէր:[52] Խաչը նաեւ տիեզերական ծառ[53] է: Օրինակ՝ հնդկացիական ապոպոկուվա (գուարանի) ցեղի առասպելական հերոս Նանդերաւուգուն (որի սրտում է գտնւում արեւը) յայտնագործում է ինքն իրեն, բերում է փայտէ մի խաչ, գլուխը դէպի արեւելք է ուղղում եւ վրան հիմնադրում երկիրը: Եւ մինչեւ այժմ փայտէ խաչը ծառայում է՝ որպէս երկրի հիմքը:[54]

Պատկերագրութեան մէջ խաչի տեսքով տիեզերական ծառն աճում է զոհաբերութեան արիւնից կամ վիշապի արեան միջից, կամ էլ՝ անմեղ զոհի, ինչպէս Յիսուսի մահն է խաչի վրայ:[55]

Արեւի ու խաչի կապը հայկական բանահիւսութեան մէջ պարզի ծէսում է ի յայտ գալիս: Հարսանեկան երգում ասւում է.

«Մեր թագուորն էր աջ, խաչկոթ խաչ ու մաչ, ...

Բինիշն էր կարմիր, արեւն էր կանաչ...

Պակն էր կարմիր, արեւն էր կանաչ»[56]:

Ի դէպ, արեւը, սովորաբար, պատկերւում է նաեւ կենաց ծառի վերեւում: Իսկ խաչքարը, ըստ աւանդոյթի, գերեզմանի արեւմտեան կողմում է դրւում՝ ոտքերի մօտ, երեսը դէպի հանգուցեալը եւ արեւին է փոխարինում: Եւ կրկին նոյնանում են արեւն ու խաչը:

Արեւի ու խաչի միասնականութեան մասին Ց. Մարտիրոսեանը գրում է. «Արեւի ամենատարածուած պատկերներից մէկը խաչամիջուկ սկաւառակն է, որ հանդէս է գալիս բոլոր վայրերի եւ բոլոր ժամանակների հայաստանեան ժայռանկարներում: Ինքը խաչ-արեւանշանը ստացուել է շրջանակի բացաման ճանապարհով եւ այդ պատճառով էլ նախնադարեան արուեստի յուշարձաններում ներկայացւում է խաչամիջուկ սկաւառակի փոխարէն՝ լուսապատկերների ու աստղապատկերների հետ միասին: Ժայռանկարային յուշարձաններում արեւախաչերը շատ տարբեր ձեւեր ունեն, սակայն հիմնական ձեւը պարզ, քառաթեւ խաչն է: Հետաքրքիր է, որ Գեղամայ եւ Սիւնեաց ժայռապատկերներում այդպիսիները երեւում են անպայման արեւը կամ ամպրոպ-կայծակը խորհրդանշելու համար:

50 **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք հարցմանց*, Կ. Պոլիս, 1729, էջ 768

51 **Հր. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. II, 1973, էջ 333-334

52 **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*,- Մատենագիրք Հայոց, Ե դար, հտ. Բ, գիրք Բ, ՁԶ

53 Տիեզերական ծառի մասին տե՛ս **V. N. Toporov**, *L',,Albero universale,,*. Saggio d'interpretazione semiotica,, Torino, 1973; **Топоров**, *О структуре некоторых архаических текстов соотносимых с концепцией ,,мирового дерева,,*.- Труды по знаковым системам, V, Тарту, 1971:

54 **А. М. Золотарев**, *Родовой строй и первобытная мифология*, Москва , 1964, с. 181

55 **L. Abrahamian, N. Sweezy**, *Armenian Folk Arts, Culture, and Identity*, p. 214-215, 283, 6.1-4

56 **Ս. Մովսիսեան**, *Հարք*, «Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն», թիւ 3, Եր., 1972, էջ 108

© National Library of Armenia

դանշող կենդանիների հետ: Այնուհետեւ խաչն անցնում է ուրարտական հիերոգլիֆների մէջ, կնիքների կրօնական մոտիւներում շատ յաճախ փոխարինում «արեւ» նշանագրին եւ բազմիցս հանդիպում, իբրեւ առանձին նշան, Ք.ա. Է դարի Թէյշեբաինի քաղաքի նիւթերի մէջ: Այստեղից էլ խաչ-արեւը ճանապարհ է հարթում դէպի հայկական նշանագրութիւն, նոյնութեամբ կրկնւում է նշանագրերի ցուցակներում, սակայն արեւը կորցնում է խորհրդանշական իմաստը եւ ստանում քրիստոնէական «խաչ» բացայայտիչը:[57] Այստեղից է՛լ աւելի պարզ է դառնում խաչի անհրաժեշտութիւնը պսակի եւ այլ ծէսերում: Շարունակելով Յ. Մարտիրոսեանի նշած խաչի ծագման եւ զարգացման սխեման՝ պէտք է ասել, որ, ազատուելով ներսի եւ դրսի աշխարհները սահմանազատող շրջանից, հզօրանում է խաչի տարածական ուժը: Կարելի է ենթադրել, որ Մարտիրոսեանի նշած սխեման աւելի շուտ վերաբերում է խաչի նշանի գաղափարախօսութեանը, քան նրա պատմական ծագումնաբանութեանը: Ինչ վերաբերում է խաչամիջուկ սկաւառակին, այն դասական մանդալա է:[58]

Սովորական խաչն, ըստ Տոպորովի, ամենապարզ նշաններից է, որ երեւան է գալիս նոր քարի դարից:[59] Նրա տարրերն աւելանալով՝ ստեղծւում է կեռախաչը: Բոլոր ժամանակներում սվաստիկան հուռութ կամ հմայակ է եղել, եւ նրան շնորհի, օրհնութեան, երկար կեանքի, բարի բախտի, բարի յաջողութեան, երջանկութեան, բեղմնաւորութեան, բարգաւաճման, չար աչքից պահպանելու եւ այլ յատկանիշեր են վերագրուել:[60] Հնում կեռախաչերը կիրառւում էին նաեւ՝ որպէս յաւերժութեան, վերածննդի եւ յարութեան խորհրդանշաններ, ու խաչերի նման կապւում էին արեւի հետ: Ինչպէս նշում է Ս. Եսայեանը, այս գաղափարի օգտին են խօսում գերեզմանների վրայ տեղադրուած կեռախաչերով կուռքերը (Մեծամօրում, Շաւարշաւանում, Կարմիր Բերդում, Կարմիր Բլուրում, Այգեստանում եւ այլ վայրերում), որոնց մի մասի ականջների վրայ են սվաստիկաները, միւսների՝ ճակատներին կամ մարմնի այլ մասերի վրայ: Սրանք արեւի պաշտամունքին նուիրուած կուռքեր են, որոնց վրայ հեղման արարողութիւն է կատարուել յուղարկաւորութեան ժամանակ:[61] Այս շարքը կարող են լրացնել վերը նշուած սվաստիկաներով առարկաները, որոնք դրւում էին հանգուցեալների կողքին:

Կեռախաչերի թեւերն աւելանալով եւ կոր մասերի ծայրերը միանալով՝ շարժման, յաւերժութեան ու արեւի խորհրդանիշ են դառնում ու միջնադարում առատօրէն պատկերւում քարագործութեան մէջ եւ արուեստի այլ ճիւղերում:

Ցաճախ շեշտւում է խաչի կենտրոնը, ինչպէս Նաւախո ցեղի մարդկանց օրինակն է, որտեղ խաչի կենտրոնում պառկելով բուժւում են: Խաչի մէջտեղում է գտնւում նրա էութեան եւ զօրութեան խտացումը: Խաչն արդէն իսկ շեշտում է կենտրոնի եւ նրանից դուրս եկող հիմնական ուղղութիւնների գաղափարը: Խաչի տեսանելի կենտրոնն ընդգծելը լրացուցիչ շեշտ է դնում այն հանգամանքի վրայ, որ նա համակարգի բարձրագոյն արժէքն է, դասակարգում եւ սրբագործում է ողջ տարածքը՝ նրանում որոշում կապերի եւ ազդեցութիւնների գծերն ու ուղղութիւնները:[62] Հաւանաբար դրա համար է քառանկիւն կամ շրջանաձեւ նախշով ընդգծւում նաեւ արծաթէ գրաւի խաչերի կենտրոնը, իսկ եկեղեցական խաչերի պարագայում զետեղւում նաեւ մասունքը: Խաչի կենտրոնը կոչւում է «ակն խաչի»: Օրմանեանը գրում է. «Խաչերն օծելու արարողութեան մէջ օծելու հինգ տեղերից առաջինը խաչի ակն է: Գուցէ դրուած ակից է ծագել «Ակն» անունը, նաեւ կարելի է մեկնաբանել իբր բխման կամ ծագման սկիզբ, որովհետեւ կենտրոնից դուրս են գալիս չորս թեւերը:[63]

Ի մի բերելով խաչին վերագրուող տարբեր յատկանիշերը՝ արժէ մէջբերել Տոպորովի հետեւեալ միտքը. «Բազմաթիւ մշակութա-պատմական աւանդոյթներում խաչը կեանքի, պտղաբերութեան, անմահութեան, ոգու եւ նիւթի միասնութեան խորհրդանիշն է: Խաչի հետ են կապւում բարգաւաճման, յաջողութեան, երջանկութեան գաղափարները: Այս հանգամանքով է բացատրւում խաչի բացառիկ դերը ծիսակատարութիւններում, կախարդութիւնում, հնագոյն արուեստում, կենցաղում եւ, ի վերջոյ, այն ամէնում, ինչ կապուած է ապագան ընկալելու հետ: Պատահական չէ, որ խաչը յարաբերակցւում է արական ուժի եւ նրա գործիքի՝ ֆալլոսի հետ: Խաչի հումից մայր հողին արական եւ իգական սկզբունքների միացումից պտղաբերութիւն է առաջանում:[64] Ժամանակի ընթացքում խաչի լայնօրէն օգտագործմանը նպաստել է նաեւ քրիստոնէական նշան դառնալը: Սակայն ակնյայտ է, որ նրա նախնական իմաստաւորումներն անաղարտ ձեւով պահպանուել են մինչեւ այժմ: Եւ յատկապէս խաչի՝ պտղաբերութեան խորհրդանիշ լինելու գաղափարն է այն դրդապատճառը, որ կանայք այն կրում էին զաւակ ունենալու նպատակով:

57 Յ. Մարտիրոսեան, *Հայաստանի նախնադարեան նշանագրերը*, Եր., 1973, 16-18

58 Մանդալայի մասին տե՛ս C. G. Jung, *Mandala Symbolism*, Princeton, 1973:

59 В. Н. Топоров, *Об одном классе символических текстов*. Balcano-Balto-Slavica. Симпозиум по структуре текста, предварительные материалы и тезисы, 1979, с. 123-124.

60 Եզեկեան, *Սվաստիկա*, «Ազգագրական հանդէս», գ. XVII, Թիֆլիս, 1908, էջ 146

61 С. А. Есаян, *Древняя культура племен северо-восточной Армении*, Ереван, 1976, с. 230.

62 Мифы народов мира, Москва, 1982, с. 12.

63 Մ. Օրմանեան, *Միսական բառարան*, Եր., 1992, էջ 48

64 В. Н. Топоров, *Об одном классе символических текстов*. Balcano-Balto-Slavica. Симпозиум по структуре текста, предварительные материалы и тезисы, 1979, с. 123-124.

© National Library of Armenia

Խաչեր



Սոյուսակ 12

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Aram Topchyan, *The Problem of the Greek Sources of Movsēs Xorenac'i's History of Armenia* (Hebrew University Armenian Studies 7). Leuven – Paris – Dudley, MA 2006 [ISBN-10 90-429-1662-1, ISBN-13 9789042916623] X + 145 pp.

Movsēs Xorenāci is considered to be *"the father of Armenian historiography."* This epithet did not prevent his work from being mistrusted and disputed as fraudulent corruption of certain literary sources. The present book written by Aram Topchyan, Senior Researcher at the Matenadaran of Yerevan (Mashtots Institute of Ancient Manuscripts), is a relecture of a number of Greek sources, thus favouring a nuanced understanding of *which* sources and *how* they might have been used by the historiographer.

The author's introduction (pp. 1-15) traces the controversial discussion on the subject demonstrating how a pejorative view on the value of Xorenac'i's historical references has been increasing since the hypercritical study of the German orientalist A. von Gutschmid († 1887). But in the last decades there emerged a more moderate way of reasoning – just to mention G. Traina and in several studies the author of this book. He clearly defines his aim "to re-examine the dominant views on Xorenac'i's references to the 'Greek' authors in question, particularly the trend of regarding all the related passages as deriving exclusively from the old Armenian versions of Eusebius' *Chronicle* and *Ecclesiastical History*" (p. 15).

In three runs A. Topchyan examines the references to Berossus, Alexander Polyhistor, Abydenus and Cephalion (pp. 17-64), to Julius Africanus' *Chronicle* (pp. 65-100), and to Firmilian's *Narration* (pp. 101-116) in Xorenac'i's *History of Armenia* in order to make evident that the latter had knowledge from those sources not only through Eusebius and that the deviations from Eusebius need not necessarily be considered as fabrications or inventions. Several key passages of the mentioned sources are juxtaposed and confronted with the Eusebian and Xorenac'ian versions in philological and historical discussion.

To give an idea of how the author has worked I would like to mention the first reference to Cephalion, with a quotation, in Xorenac'i's *History of Armenia* (I, 5). This passage has been a subject of considerable misinterpretation, and in this case, again, von Gutschmids judgement (1876) dominated in assessments of philologists and historians in the following hundred years or more. Based on Eusebius' *Chronicle* I, 93-94, he regarded this passage as fake and fabricated.

The author of the present study re-examines von Gutschmid's interpretation meticulously. He juxtaposes both textual sequences (p. 49). This makes it immediately evident that there is no literary dependency. What the two excerpts have in common is their topic. "Xorenac'i's quotation is independent of Eusebius' *Chronicle*" (p. 47) – a thought uttered by Langlois already some 15 years before von Gutschmids verdict.

A. Topchyan convincingly states: "Xorenac'i cited from the lost writing of Cephalion not through Eusebius' *Chronicle* but either directly or, as is more probable, through another unknown source." (p. 48). Thus he is refuting von Gutschmids view of denying Cephalion's passage as authentical.

© National Library of Armenia